**Արձանագրություն N 2**

**<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9>> ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի գ. Այգեձորի համայնքային նշանակության նոր մարզադաշտի կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 18.07.2017թ
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան /գնահատող/
Գ. Գևորգյան / բացող /
Ֆ. Սարգսյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

**1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի հունիսի 28-ին, ժամը 11:00-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

*ՀՀ դրամ*

| *Հ/Հ* | *Մասնակցի անվանումը* | *Հասցե* | *Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)* | *ԱԱՀ* | *Առաջարկված ընդհանուր գինը* |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ | ք. Վանաձոր, Վարդանանց 23/159 | 989 000 | - | 989 000 |
| 2 | <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ | ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ. 6/6 | 2 440 000 | - | 2 440 000 |
| 3 | <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ | ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15 | 3 050 000 | - | 3 050 000 |
| 4 | <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ | ՀՀ ք. Երևան Բաբաջանյան 19շ. 23բ | 3 500 000 | - | 3 500 000 |
| 5 | <<ԷԼՄԱ>> ՍՊԸ | ք. Եղվարդ, Երևանյան փող, թիվ 1 շենք | 3 500 000 | - | 3 500 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ | ք. Եղվարդ, Նար Դոսի փողոց, 28ա | 4 200 000 | - | 4 200 000 |
| 7 | <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ | ք. Վանաձոր Գր. Լուսավորիչի Ց-6 6/5 | 4 343 443 | - | 4 343 443 |
| 8 | <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ | ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39 | 4 400 000 | - | 4 400 000 |
| 9 | <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ | ք. Հրազդան, Միկրոշրջան 209/14 | 5 000 000 | - | 5 000 000 |
| 10 | <<ՀԳՇՆ>> ՍՊԸ | ք. Երևան 0028, Կիևյան 16 | 5 416 667 | 1 083 333 | 6 500 000 |

դ) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հունիսի 30-ին, ժամը 15:00-ին:

ե) Հայտերի ուսումնասիրության արդյունքում առաջացել է փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության հետ կապված պարզաբանում ստանալու անհրաժեշտություն, որով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է համապատասխան գրությամբ դիմել լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, և կասեցնել նիստը մինչև պարզաբանում ստանալը:

զ) ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 03.07.2017թ. N 02/27.1/3939-17 գրությանն ի պատասխան ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.07.2017թ. 04/27-1/12633-17 գրությունը, որից ելնելով՝ հանձնաժողովը որոշում է.

1. <<ԷՄ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ բոլոր փաստաթղթերում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրության արտատպումները:

2. <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ հայտի ապահովման գումարը փոքր է հրավերով պահանջվող չափից (հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսի փոխարեն ներկայացվել է երկու տոկոսը), ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրում ամսաթվում նշված է օգոստոս ամիսը, որը ներկա ամսվան հաջորդող ամիս է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

| Մրցույթում զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ | բավարար |
| 2 | <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ | բավարար |
| 3 | <<ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ | բավարար |
| 3 | <<ԷԼՄԱ>> ՍՊԸ | բավարար |
| 4 | <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ | բավարար |
| 5 | <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ | բավարար |
| 6 | <<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ | բավարար |
| 7 | <<ՀԳՇՆ>> ՍՊԸ | բավարար |
| 8 | <<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ | անբավարար |
| 8 | <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ | անբավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ -ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/9>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հուլիսի 25-ին ժամը 15:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | ---------- | Ա. Ջանջուղազյան |
| Անդամ՝ | ---------- | Ռ. Եղիազարյան |
| | ---------- | Ա. Գրիգորյան |
| | ---------- | Գ. Գևորգյան |
| | ---------- | Ֆ. Սարգսյան |
| Քարտուղար | ---------- | Տ. Վասիլյան |